Գ-25/094
11.06.2025թ.

ԼՈՒՔՍՈՐԻԱ ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00244414)
տնօրեն Ա.Առաքելյանին
(հասցե՝ ք.Երևան, Գ.Աղաբաբյան փող.1/26)
Հեռ" +374 77-07-02-49
էլ. հասցե՝ luxoriallc@mail.ru

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու և ԼՈՒՔՍՈՐԻԱ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 16.05.2025թ-ին կնքված թիվ ԳԱԿ-ԳՀԾՁԲ-25/1-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) շրջանակներում ԼՈՒՔՍՈՐԻԱ ՍՊԸ-ն ստանձնում է հյուրանոցային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, որը չի կատարել : Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա ենթակետը /մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին / Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ՓԲԸ–ն 11.06.2025թ-ից միակողմանիորեն ամբողջությամբ լուծում է Պայմանագիր: Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումը 2025 թվականի հունիսի 11-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելու հաջորդող օրը այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը Ամերիաբանկ ՓԲԸ-ի համապատասխան հաշվեհամարներին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 183 000 (մեկ հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ և 274500 (երկու հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ապա Պատվիրատուն Ընկերությանը ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Ամերիաբանկ ՓԲԸ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ՓԲԸ-ի անվամբ բացված 1570022619620100 հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ՓԲԸ-ի հաշվապահություն:

Տնօրեն Վ. Բաղալյան